ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. նոյեմբերի 1 թիվ 133 - Ա

ՌԵՀԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> թիվ 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2011 թվականի հոկտեմբերի 21-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ռ. Սարգսյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2011 թվականի նոյեմբերի 1-ից Ռեհան Ավետիսի Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2004 թվականի սեպտեմբերի 1-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՍՐՅԱՆ